

ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ

ՎԱՐՔ ՄԱՇՏՈՑԻ ԵՒ ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍ

Զ. — Վարք Մաշտոցի, տող 613-617

Որով անդէն յական թօթափել վայրենամիտ և դատարկասուն և անասնադարոյ աշխարհն Աղուանից մարգարէագէտք և առաքելածանօթք և աւետարանածառանդք լինէին և ամենայն աւանդելոցն Աստուծոյ ոչ իւրք անտեղեկք:

Է. — Վարք Մաշտոցի, տող 700-710

Ապա դարձեալ յետ այնպիսի առաւել բարձրագոյն վարդապետութեանն, սկսեալ երանելոյն Մաշտոցի ճառս յաճախագոյնս, դիւրապատուս, շնորհագիրս, բազմադիմիս ի զօրութենէ և ի հիւթոյ գրոց մարգարէականաց կարգել և յօրինել լի ամենայն ճաշակօք աւետարանական հաւատոցն ճշմարտութեան, յորս բազում նմանութիւնս և օրինակս ի յանցաւորացս աստի, առաւելագոյն վասն յարութենական յուսոյն առ ի հանդերձեալսն՝ յերկրեալ կազմեալ, զի հեշտընկալք և դիւրահասոյցք արժարագունիցն և մարմնական իրօք զբաղելոցն լինիցին, առ ի սթափել և զ[ու]արթ[աց]ուցանել և հաստահիմն առ ի խոստացեալ աւետիսն քաջալերել:

Զ. — Ագաթանգեղոս, յօդ. 840

Որով անդէն յական թօթափել վայրենամիտքն և դատարկասունքն և անասնաբարոյ աշխարհարնակքն վաղվաղակի մարգարէագէտք և առաքելածանօթք և աւետարանածառանդք լինէին, և ամենայն աւանդելոցն Աստուծոյ ոչ իւրք անտեղեկք:

Է. — Ագաթանգեղոս, յօդ. 886

Ապա յետ այնպիսի գործոց դարձեալ առաւել բարձրագոյն վարդապետութեամբ սկսեալ երանելոյն Գրիգորի ճառս յաճախագոյնս զժուարպատուս, առակս խորիմացս դիւրալուրս բազմադիմիս շնորհագիրս, յարդարեալս ի զօրութենէ և ի հիւթոյ գրոց մարգարէականաց, լի ամենայն ճաշակօք կարգեալս և յօրինեալս աւետարանական հաւատոցն ճշմարտութեան: Յորս բազում նմանութիւնս և օրինակս յանցաւորաց աստի, առաւել վասն յարութենական յուսոյն առ ի հանդերձեալսն յերկրեալ, զի հեշտընկալք և դիւրահասոյցք արժարագունիցն և մարմնական իրօք զբաղելոցն լինիցին, առ ի սթափել զուարթացուցանել և հաստահիմն առ իստացեալ աւետիսն քաջալերել:

Կարծէ նկատել որ Ագաթանգեղոսի այս պարբերութենէն առջ նախորդը կը վերջանար զգամենայն աւուրս կենաց իւրոց լուսաւորեք՝ անկատար անցեալով. յաջորդ պարբերութիւնը նոյնպէս անկատարով կը սկսի շառանց պաշտութեան սսնեք, և կը թուի շարագրութեան հարազատ շարունակութիւնն ըլլալ: Ըստ այսմ, վերագրեալ պարբերութիւնը ընդմիջարկութիւն մըն է յայտնապէս, նպատակ ունենալով աւելի բարձրացնել Ս. Գրիգոր Լուսաւորչի գործունէութիւնը:

Վարք Մաշտոցի, շար. տող 711-726

Եւ այնպէս յամենայն կողմանս Հայոց, Վրաց և Աղուանից զամենայն ժամանակս կենաց իւրոց, զամառն և զձմեռն, զաւր և զգիշեր անվեհեր և առանց յապաղելոյ իսկ իւրով աւետարանական և ողջապատուս գնացիւքն առաջի թագաւորաց և իշխանաց և ամենայն հեթանոսաց՝ անընդդիմակաց ի հակառակորդաց՝ զամենափրկչին Յիսուսի անուն կրեաց

Ագաթանգեղոս, յօդ. 843-844.

Չամենայն ժամանակս կենաց իւրոց զամառն և զձմեռն, զաւր և զգիշեր, անվեհեր առանց յապաղելոյ իւրով իսկ աւետարանական և ողջ(ուն)ապատուս գնացիւքն, առաջի թագաւորաց և իշխանաց և ամենայն հեթանոսաց՝ անընդդիմակաց ի հակառակորդաց զամենափրկչին անունն Յիսուսի կրեաց, և զամենայն ոգի աստուածազգեստս և ոգեղէնս վառեաց:

յանձին: Եւ զամենայն ոգի քրիստոսազգեստ և հոգեղէն վառեաց, և բազում բանդականաց և կալանաւորաց և տաղնապելոց ի բռնաւորաց թողութիւն արարեալ, կորզելով զնոսա անաւոր զօրութեամբ փառացն Քրիստոսի, և բազում մաւրնակս անիրաւագիրս անիրաւութեան զատառեաց: Եւ բազում սգաւորաց կարճամտեւոց մխիթարական վարդապետութեամբն զակնկալութիւն յուսոյն ըստ յայտնութեան փառաց մեծին Աստուծոյ եւ փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի (նօթճեաց) [նուանեաց] և զամենայն միանգամայն յաստուածապաշտութեան պայման անդր փոխեաց:

Վարք Մատթայի, աղ 727-749

Եւ զարձեալ բազում և անհամար զունդս զունդս վանականաց ի շէնս և յանշէնս, դաշտականս և լեռնականս, անձաւամուտս և արգելականս բնակեցուցեալ հաստատէր: Զորս ընդ ժամանակս ժամանակս իւրով մարմնովն իսկ օրինակ ցուցեալ, առեալ զամանս յաշակերտաց յիւրաքանչիւր մենաստանացն և երթեալ լեռնակեաց, սորամուտ, ծակախիթ եղեալ զաօրեական զկերակուրն խոտարուտ ճաշակօքն վճարէին. այնպէս վշտակեաց տկարութեան զանձն տային, մանաւանդ որսց հայեցեալ ի մխիթարութիւն առաքելական բանիցն թէ «Յորժամ տկար եմ վասն Քրիստոսի, յայնժամ զօրացեալ լինիմ», և թէ «Լաւ ևս լիցի պարծել տկարութեամբս, զի բնակեսցէ յիս զօրութիւնն Քրիստոսի»:

Անդ էր այնուհետեւ շարքենալ գինւով այլ առաւելուլ հոգևով, և պատրաստել զսիրտս երգօք հոգևորօք ի փառս և ի զովութիւն Աստուծոյ: Անդ կրթութիւն քաղցրուսոյց ընթերցուածոց հոգեպատում գրոց: Անդ քաջալերութիւն և յորդորական վարդապետութեան տա ի յառաջադէմ բնարութիւնն՝ պատկանամբար քրիստոսադիր կիտին: Անդ ետալ հոգևով աստուածապաշտ ծառայութեամբ: Անդ ազօթ աղերասլիք եւ պալլասանք փարեկիք և խնդրուածք հաշտեցուցիչք վասն ամենեցուն կենաց առ մարդասէրն Աստուած:

Եւ բազում բանդականաց և կալանաւորաց և տաղնապելոց ի բռնաւորաց փրկութիւն արարեալ, կորզելով զնոսա անաւոր զօրութեամբ փառացն Քրիստոսի, և բազում մաւրնակս անիրաւագիրս անիրաւութեան զատառեաց: Եւ բազում սգաւորաց կարճամտեւոց մխիթարական վարդապետութեամբն զակնկալութիւն յուսոյ ըստ յայտնութեան փառաց մեծին Աստուծոյ և (ամենա)փրկչին Յիսուսի Քրիստոսի նուանեաց, և զամենայն միանգամայն յաստուածապաշտութեան պայման անդր փոխեաց:

Աղաթանգեղոս, յօդ. 845-848

Եւ զարձեալ բազում և անհամար զունդս զունդս վանականաց ի շէնս և յանշէնս, դաշտականս և լեռնականս, անձաւամուտս և արգելականս բնակեցուցեալ հաստատէր . . (845):

Եւ ինքն ընդ ժամանակս ժամանակս յանապատ լերինս ելանէր, ուր և ինքեան իւրով անձամբն իսկ օրինակ ցուցանէր: Առեալ զամանս ամանս յաշակերտացն յիւրաքանչիւր մենաստանաց երթեալ, լեռնակեաց, մենակեաց, սորամուտ, ծակախիթ եղեալ, և զաօրեական խոտարուտ ճարակօք վճարեալ: Եւ այսպէս վշտակեաց տկարութեան զանձինս տուեալ, մանաւանդ որսց հայեցեալ ևս ի մխիթարութիւն առաքելական բանիցն, թէ «Յորժամ վասն Քրիստոսի տկարանամ՝ յայնժամ զօրացեալ լինիմ», և թէ՛ «Լաւ ևս լիցի պարծել տկարութեամբս, զի բնակեսցէ յիս զօրութիւնն Քրիստոսի» (846):

Անդ էր այս շարքենալ գինւով, այլ առաւելուլ հոգևով, և պատրաստել ըզսիրտս երգօվք հոգևորօք ի փառս և ի զովութիւն Աստուծոյ: Անդ կրթութիւն քաղցրուսոյց ընթերցուածոց հոգեպատում գրոց: Անդ քաջալերութիւն յորդորական լուսաւոր վարդապետութեան, առ ի յառաջադէմ բնարութիւն պատկանամբար քրիստոսադիր կիտին: Անդ ետալ հոգևով աստուածապաշտ ծառայութեամբ: Անդ ազօթ աղերասլիք և պաղտատանք փարեկիք և խնդրուածք հաշտեցուցիչք վասն ամենեցուն կենաց առ մարդասէրն Աստուած (847):

Եւ նսովին հոգեկրօսն արուեստիւն հանէր
աւուրս բազումս յանապատ տեղիս, մինչև
ազդ լինէր յերիցանց . . .

Ը. — Վարք Մաշտոցի, տող 730—803

Իսկ արդ յորժամ լսիցեմք, եթէ
սոկսու Յիսուս առնել և ուսուցանել՝,
պարքէն առնէ և ուսուցանէ, և ոչ եթէ
զի պարզեցեցէ՝ իմանալի է: Եւ բարե-
խօսել նորա վասն սրբոց և բարեխօսել
Հոգւոյն Սրբոյ՝ առ ի վարդապետելոյ մեզ
զի ընդ միմեանց բարեխօսիցեմք, եւ ոչ
երբ առ բարձուալոյն սք Միամնին կամ
Հոգւոյն Սրբոյ բարեխօսելն գիտելի է,
քանզի միապատիւ է աստուածականն և
ոչ բազմորար:

Իսկ երանելի առաքելոյքն ընկալեալ
ի վարդապետութենէ ճշմարտութեանն՝
նախ կարօտական անձանցն մատակարա-
րէին, և ապա աշակերտացն բարձեալ
տանէին: Երբնմն առանձինն և երբնմն
ժողովովքն զուսուցելովք զփառսն Քրիս-
տոսի առաւելովքն բարձրացուցանէին:
Քանզի առաւել օգտակար իսկ է յամենայն
աշխարհակիր զբօսանաց առանձինն սահ-
մանել և միայն աստուածապաշտութեան
պարսպել, զոր և մարգարէքն գործէին,
որք ի լերինս և յանապատս և ի փապարս
վիմաց՝ զաստուածեղէն կրօնիցն զձառա-
յութիւնսն հարկանէին:

Նոյնպէս և ամենայն հարքն, որք
յաջորդեցան յառաքելական կանոնաց,
կրեալ անձամբք շուսութիւնս բերէին
վերջնացս օրինակ. ուստի երանելիս այս
բարձեալ բերէր զաւանդելոցն պատիւ, և
ամենայն մատուցելոց առ նա զնոյն պատ-
ուիրեալ զուշակէր: Եւ այնպէս յառաջ
ամենայն աստուածեղէն գանձուցն վայել-
չութեամբք լցեալք պարարտացեալք խա-
ղացեալք գային, ի բազում ժամանակս
նսովին ի նոյն կանխեալք ի նմին հանա-
պազորդեալք:

Թ. — Վարք Մաշտոցի, տող 847—859

Բայց թէպէտև միայնաւորութեան
տրամութիւն չթողոյր զուարթանալ, սա-
կայն զաւետարանական զընթացսն և ըզ-
վերակացութիւնն սրբոյ եկեղեցւոյ՝ շնոր-
հօքն Աստուծոյ առանց պակասութեան
տանէր, և առաւել փութայր գուն եղեալ

Եւ նսովին հոգեկրօսն արուեստիւն հան-
եալ աւուրս բազումս յանապատ տեղիս,
յակուսն Եփրատական գետոյն» . . . (848),

Ը. — Ագաթանգեղոս, յօդ. 852—853

Իսկ արդ՝ յորժամ լսիցեմք, եթէ
սոկսու Յիսուս առնել և ուսուցանել՝,
պարքէն առնել՝ զի ուսուցէ, և ոչ եթէ
զի պարզեցեցի, իմանալի է. և բարեխօ-
սելն նորա վասն սրբոց, և բարեխօսել
Հոգւոյն Սրբոյ՝ առ ի վարդապետելոյ մեզ,
զի ընդ միմեանց բարեխօսիցեմք, և ոչ
եթէ առ բարձրագոյն սք Միամնին կամ
Հոգւոյն Սրբոյ բարեխօսելն գիտելի է,
քանզի միապատիւ է աստուածականն, և
ոչ բազմորար: Իսկ նրանելի առաքելոցն
ընկալեալ ի վարդապետութենէ ճշմար-
տութեանն՝ նախ կարօտական անձանցն
օգուտ մատակարարէին, և ապա օրինակ
աշակերտելոցն բարձեալ տանէին, երբնմն
առանձինն, և երբնմն ժողովովք զուսու-
ցելովք՝ զփառսն Քրիստոսի առաքելովքն
բարձրացուցանէին:

Քանզի առաւել օգտակար իսկ է յա-
մենայն աշխարհակիր զբօսանաց առան-
ձինն սահմանել, և միայն աստուածապա-
տութեան պարսպել: Չոր և մարգարէքն
յառաջագոյն գործէին, որք ի լերինս և
յանապատս, յայրս և ի փապարս վիմաց
զաստուածեղէն կրօնիցն զձառայութիւն
հարկանէին: Նոյնպէս և ամենայն հարքն
որ յաջորդեցան, յառաքելական կանո-
նացն կրեալ՝ ինքեանք անձամբ բերէին
օրինակ վերջնացս: Ուստի և երանելիս
այս բարձեալ տանէր զաւանդելոցն պա-
տիւ, և ամենայն մատուցելոց առ նա
զնոյն պատուիրեալ զուշակէր: Եւ այն-
պէս յառաջ, ամենայն աստուածեղէն գան-
ձուցն վայելչութեամբք լցեալ պարարտա-
ցուցեալ ամեթութեամբք զամենեւեան՝
խաղացեալ գայր ի բազում ժամանակս,
և նսովին ի նոյն կանխեալ և ի նմին հա-
նապազորդեալ:

Թ. — Ագաթանգեղոս, յօդ. 887, 888

Չաւետարանական ընթացսն և զվե-
րակացութիւն եկեղեցւոյ սրբոյ՝ շնորհօքն
Աստուծոյ առանց պակասութեան տանէր.
և առաւել փութայր գուն եղեալ՝ զամե-
նայն սք յորդորելով առ ի բարեացն
քաջալերութիւն:

գամեննեան յորդորելով առ բարեացն քա-
 կ քաջութիւն: Եւ զցայգ և զցերեկ պա-
 ճօք և աղօթիւք և ուժգին խնդրուածովք
 և բարձրագոյն բարբառովք աստուածա-
 զիր պատուիրանացն հրամանս յուչ առ-
 նելով զգուշացուցանելով ամենայն մար-
 դոյ, մինչև բազմագոյնս և զգթուարա-
 գոյն վարուց կրթութիւնս, մանաւանդ
 զի և զմտու իսկ ամէր՝ ըստ տէրունական
 հասակին՝ զօր վսխճանին, չտայր քուն
 աչաց և ոչ նիրհ արտեանաց մինչև հա-
 սանել ի հանգիստ Տեառն:

Կարժէ արձանագրն որ Ագաթանգեղոսի մէջ Գրիգոր Լուսաւորչի աւրնչու-
 թեամբ գանուող այս հատուածին մեծագոյն մասը նոյնութեամբ կը կարդացուի
 Փաստասի մէջ ալ՝ Լուսաւորչի թոռան Գրիգորիսի վերաբերմամբ. այսպէս. «Զա-
 շտարանական ընթացսն և զվերակացութիւն կկեղեցւոյ սրբոյ շնորհօքն Աստուծոյ
 աւանց պակասութեան տանէր. առաւել ևս փութայր, զուն կղեւլ յորդորելով գա-
 մեննեսեան առ ի բարեացն քաջալերութիւն, զցայգ և զցերեկ պաճօք և աղօթիւք և
 ուժգին խնդրուածովք և բարձրակալ կասարման հաւատովքն՝ մերձաւորաց և հեռա-
 ւորաց զհոգեւոր եռանդն ամէր» (Գ. Գ.):

Ժ. - Վարք Մաշտոցի, ատղ 914-942

Որում դէպ լինէր յետ վոխճանի
 սրբոցն բազում և ազգի ազգի փորձու-
 թեանց և կապանաւոր վշտաց, մեկուկուր
 մենամարտիկ՝ երկպառական բանութեանն
 ի Տիգրան քաղաքի վասն Քրիստոսի յաղ-
 թութեամբ տարեալ համբերեալ, վասն
 սրոյ և զխոտանովանողական անուն ժա-
 աանգեալ, ի նոյն վերակացութիւն դառ-
 նայր յերկիրն Հայոց:

Իսկ բարեացապարտն վահանայ յան-
 կարճահաս կենաց ասպրնշական ցակկա
 ամենեցուն լինէր որ աշխարհածնունդ
 հայրենեացն սեպհական որդի գտեալ,
 շնորհօքն Աստուծոյ մերոյ, մերձաւոր
 կենակից վայելէր, և զի ըստ օրինակի
 զրելոցս առ ի մէնջ հորքն ի կասարումն
 դարձան:

Ոչ եթէ ի հին համբաւուց տեղեկա-
 ցեալ և մատենագրեալ զայս կարգեցաք,
 այլ որոց մեր իսկ ակաստեան կղեւլ կեր-
 պարանացն և առնթերակաց հոգեւորա-
 կան գործոց և լսող շնորհապատում վար-
 դապետութեանն, և նոցին արբանեակ
 ըստ աւետարանական հրամանացն: Ոչ

Զցայգ և զցերեկ պաճօք և աղօթիւք
 և ուժգին խնդրուածովք, և բարձրագոյն
 բարբառովք գաստուածադիր պատուիրա-
 նացն զհրամանսն յուչ առնելով զգուշա-
 ցուցանէր ամենայն մարդոյ, Չտայր քուն
 աչաց, և ոչ նիրհ արտեանաց, և ոչ հան-
 գիստ իրանացն, մինչև հասանել ի հան-
 գիստ Տեառն:

Ժ. - Ագաթանգեղոս, յօդ. 13, 897-9

Որ համբերութեամբ բազում և ազգի
 ազգի փորձութեանց և կապանաւոր վշտաց
 մենակուր մենամարտիկ երկպառական
 բանութեան յԱրտաշատ քաղաքի վասն
 Քրիստոսի յաղթութեամբ տարեալ, սրոյ
 զվկայ անուն ժառանգեալ, որ ի մահ
 հասեալ մտեալ, և կամօքն Աստուծոյ
 այսրէն դարձեալ ի վերակացութիւն դառ-
 նայր յերկիրս Հայոց: Սա մտեալ ի դրունս
 մահու՝ դարձեալ անտի կամօքն Աստուծոյ,
 վարդապետութեանն Քրիստոսի պապա-
 մաւոր դտեալ, յետ Աստուծոյ սքանչելա-
 գործ պատուհասին մարդասիրութեան:
 Իսկ բարեացապարտն Տրդատ յանկարծա-
 կամ՝ կենացն ասպրնջական ցտնկալի ա-
 մենեցուն լինէր, որ աշխարհածնունդ
 հայրենեացն սեպհական որդի գտանէր
 շնորհօքն Աստուծոյ, և յաւիտենական
 կենացն մերձաւոր լինէր (13):

Եւ արդ՝ քանզի ըստ օրինակի գրե-
 լոցս առ ի մէնջ՝ ի կատարումն դարձու-
 ցաք, ոչ եթէ ի հին համբաւուց տեղե-
 կացեալ և մատենագրեալ զայս կարգեցաք,
 այլ որոց մեզէն իսկ ակաստեաք կղեւլ
 կերպարանացն և առնթերակաց հոգեւո-
 րական գործոցն և լսող շնորհապատում
 վարդապետութեանն, և նոցին արբան-
 եակք ըստ աւետարանական հրամանացն:

սուտապատում եղեալ առ ի մերոց բանից զհօրէն իմոյ կարգեցաք, այլ զյաճախագոյնսն թողեալ և ի նշանաւոր գիտակացն քաղելով զհամառօտան կարգեցաք, որք ոչ միայն մեզ այլ և որ զմատենս ընթեանուն՝ յայտնի է: Քանզի չէաք իսկ հանդուրժողք զամենայն արարեալսն զըտակաւ զիւրաքանչիւրսն, այլ ի դիւրագոյ՝ս և հեշտագոյնս, յառաքելական անդր զանձինս պատասպարեցաք, որոց անցեալ զբազմախումարգասեօք սրբոցն, առ ի մանրակրկիտ առնելոյ՝ զկարեւորագոյնս պատմելոյ, զհանգամանս ասացաք, ոչ ի պատիւ ինչ բնիւրիցն Աստուծոյ որք ամենապարծ և կենդանատուր խաչիւն ծանուցեալք յարգեցան, այլ յօրինակ քաջալերիչ հոգեւոր ծննդոց իւրեանց և որք նոքօք աշակերտելոց իցեն յազգս ազգաց:

Ոչ սուտապատում ճարտարախօս եղեալ առ ի մերոց բանից, այլ զյաճախագոյնսն թողեալ և ի նշանաւոր գիտակաց քաղելով՝ զհամառօտան կարգեցաք, որք ոչ միայն մեզ, ով թագաւոր, այլ յարժամ քո առաջի զմատենանդ ընթեանուցուն՝ յայտնի է (897):

Քանզի չէաք իսկ հանդուրժող զամենայն արարեալս սրբոցն զտակաւ զիւրաքանչիւրսն նշանակել, այլ ի դիւրագոյն և ի հեշտագոյն յառաքելականն անդր զանձինս պատասպարեցաք, որոց անցեալ զբազմախումարգասեօք սրբոցն առ ի մանրակրկիտ առնելոյ՝ զկարեւորագոյնսն և զօգտակարագոյնսն պատմեցաք (898):

Ուստի և մեր առեալ հանդոյն աւացաք, ոչ ի պատիւ ընտրիւց Աստուծոյ, որք ամենապարծ և կենդանատուր խաչիւն ծանուցեալք յարգեցան, այլ յօրինակ քաջալերիչ հոգեւոր ծննդոց իւրեանց, և որք նոքօք աշակերտելոց իցեն յազգս ազգաց, ըստ բանի հոգեւորական երգչին որ ասէ (899):

Վերոգրեալ տուեալներու հիման վրայ, կրնայ ընդունելի համարուիլ անծանօթ ձեռքի մը միջամտութեան տակայութիւնը Ազգաբնակչոսի մէջ: Կրնայ կասկածուիլ նայն ձեռքին միջամտութիւնը նաև Փաւստոսի մօտ. նկատի ունենալով Մաշտոցի վարքին 338-351 տողերը և Փաւստոսի 38-39 էջերն ալ (Գ. Ժ.):

(Վերջ)

Ն. ԱՐԲ. ԾՈՎԱԿԱՆ

